ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 46. ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

1

«Տայկա» հեղաշրջումը խալխլեց տոհմական ավագանու հզորությունը: Տոհմային առաջնորդների ջոկատները ցրվեցին, մտցվեց ընդհանուր զինապարտություն և ստեղծվեց միասնական պետական բանակ: Տոհմավագները վերածվեցին պալատական պաշտոնյաների, որոնք պետությունից ստանում էին խոշոր կալվածքներ՝ պայմանական օգտագործման իրավունքով: Արդեն ***VIII դ. այդ տիրույթները և պաշտոնները սկսեցին վերածվել ժառանգական սեփականության, իսկ դրանց տերերը՝ ավատատերերի:*** Ընդարձակ հողային տիրույթներ ստացան և բուդդայական տաճարները: ***710 թ.*** հիմնադրվեց առաջին մշտական ***մայրաքաղաք Նարան:***

2

Սամուրայ նշանակում է նա, ով ծառայում է: Սամուրայների դասը համարժեք էր եվրոպական ասպետությանը: Սամուրայները վարպետորեն տիրապետում էին սառը զենքին, գործում էին Բուշիդո կոչվող խիստ վարքականոնին համապատասխան: Իրենց սենյորից սամուրայները ստանում էին կալվածք կամ դրամամթերային վարձատրություն և հավատարմորեն ծառայում էին նրան:

3

XIV–XVI դդ. Ճապոնիայում կազմավորվեցին մի քանի տասնյակ խոշոր ***ավատատիրական իշխանություններ***: Մանր և միջին ավատատերերը կախման մեջ ընկան խոշոր իշխաններից: Սովորական երևույթ դարձան ավատատերերի պատերազմները, ***մեծացավ սամուրայ ռազմիկների պահանջարկը, նրանց թվաքանակը երկրում կտրուկ աճեց:*** Աճեց նաև սպառազինության, ձիերի, մթերքի պահանջարկը: Իշխանական նստավայրերի և խոշոր տաճարների շուրջը ***սկսեցին ձևավորվել միջնադարյան քաղաքները***, զարգացան արհեստները և ներքին առևտուրը: Ուժեղացավ գյուղացիների շահագործումը, ավելացան հարկերը: Միայն XV դ. Ճապոնիայում տեղի ունեցան 120 գյուղացիական ելույթներ, որոնց հաճախ միանում էին բուդդայական վանականները և սամուրայները:

4

Մարտերում հմտորեն կիրառելով ճապոնացի վարպետների կրկնօրինակած հրազենը, 22 տարի տևած պատերազմների արդյունքում նա կարողացավ միավորել երկրի մարզերի կեսից ավելին: Օդա Նոբունագան չէր խնայում ոչ մրցակիցներին, ոչ նրանց աջակցող բուդդայական վանականներին, ոչ էլ ապստամբ գյուղացիներին: Երկիրը միավորելու և տնտեսությանը զարկ տալու համար նա վերացրեց իշխանությունների միջև սահմանները, անցկացրեց հողերի ցուցակագրում, բարեկարգեց ճանապարհները, մտցրեց ընդհանուր դրամ:

5

Խիդեէսի կառուցած անմատչելի Օսակա ամրոցը, որը նրա կառավարության նստավայրն էր:

Ճապոնական հասարակությունը բաժանվեց 4 դասի՝ սամուրայներ, արհեստավորներ, գյուղացիներ և վաճառականներ: Սյոգունը հենվում էր սամուրայների դասի վրա, նրանց սյոգունը վարձատրում էր կալվածքով կամ դրամով: Արհեստավորները սյոգունի իշխանությանը սպառնալիք չէին, ուստի նրանց նկատմամբ սահմանափակումներ քիչ կիրառվեցին: Բնակչության մեծամասնությունը գյուղացիներն էին: Նրանց արգելված էր հեռանալ այն հողից, որի վրա ապրում և աշխատում էին: Վաճառականները գտնվում էին սանդղակի ստորին մասում: Նրանք ապրում էին քաղաքներում, բայց չէին կարող մասնակցել քաղաքի կառավարմանը, իրավունք չունեին ձոխ կյանք վարելու և շքեղ հագուստներ հագնելու:

Տոկուգավա սյոգունատը

Տոկուգավա սյոգունները Ճապոնիան կառավարեցին ավելի քան 250 տարի: Տոկուգավա սյոգունները չէին վստահում եվրոպացիներին և քրիստոնեությանը: Նրանք եվրոպացիներին հիմնականում վտարեցին Ճապոնիայից: Բացառություն էին հոլանդական վաճառականները: Միևնույն ժամանակ ճապոնացիներին արգելվեց արտասահման մեկնել: Փաստորեն Ճապոնիան կտրվեց արտաքին աշխարհից, այդ փակ վիճակը շարունակվեց մինչև 1868 թ.: Մեկուսացման այս երկարատև ժամանակաշրջանը խաղաղության և կայունության շրջան էր Ճապոնիայի համար: Արտաքին աշխարհի համար փակված Ճապոնիայում սկսվեց բարգավաճման և մշակութային մեծ ակտիվության ժամանակաշրջան: